Մարաց, և այս յաւուրց Հայկազանց մերոց ցվերջ կոյս Դ դարու. յորմէ հետէ խսպառ նուաճեցաւ 'ի Պարսից. որք կոչէն զառհասարակ երկիրն ԱՂԷՐ-ՊԻՑՃԱՆ 'ի հին անուանէն, որ նշանակէ Հրոյ-դարան կամ տեղի, վասն բազում ատրուշանացն պաշտամանց հրոյ, և այն 'ի պատճառս հրաբխից երկրին և բորբոքման նաւթային նիւթոց յառաջին ժամանակն:

112. Գլխաւոր գաւառ և նախիշխան կուսակալութիւն աշխարհիս է ԹԻՊՐԻԶ 'ի հիւսիսի արևելից ծովուն, 'ի հարաւոյ Մարանդայ, և 'ի հիւսիսոյ Սիւհէնտ լերին և Մարաղայ գաւառի, տարածեալ ընդ արևելս, ընդունելով անտուստ 'ի Սաւալան լերանց զԱՃի-լայ կամ Սի-ըկ-ոպ գետ որ Թաւրի 'ի մէջ կոյս արևելակողման ծովուն, և նման նմին դառնահամասի լինել ըստ անուանն: Ընդարձակ է գաւառն և վիճակք բազմագեօղք 'ի նմա, այլ ոչ քաջ ծանօթք. որոց գլխաւոր քաղաք և համօրէն Ատրպատականի է ԹԻՊՐԻԶ կամ ԴԱՎՐԷԺ, մի 'ի կարի նշանաւոր և բարգաւաճ քաղաքաց Ասիոյ, իբրև 30 մղոնաւ հեռի յարևելից ծովուն Ուրմիոյ. 'ի հարաւոյ կամ յահեկէ Սիւրխապ գետոյ, 'ի բարձու 4700', և յեղը դաշտի մեծի որ ձգի 'ի ծովակողմանէն ցայն վայր. ըստ արևելեայց շինեալ է 'ի Զոպէյտայ կնոջէ Հարուն-էլ-Ռէշիտ ամիրապետի յԸ դարու, և կոչեցեալ Թաւրիզ այսինքն ջերմնահալած. ըստ Հայոց յԳ դարու 'ի քաջէն խոսրովայ՝ յետ վանելոյն զԱրտաշիր, և առ առակէ նորին կոչեցեալ Դա-ի-էրէթ, որ 'ի հին գրուածս ուրեք գրի և Գահավէրէթ. իսկ ըստ եւրոպէացւոց ոմանց՝ հնագոյն ևս կարծի՝ և յիշատակեալն 'ի Պտղոմեայ աշխարհագրէ Գաբրէա կամ Տաբրէա անուն. կոչէր և Գանձակ, այլ ոչ է բուն Գանձակն շահաստան Ատրպատականի՝ զոր վերագոյն յիշեցաք (109): Ընդարձակ է յոյժ քաղաքն և կրկնապարիսպ, այլ չէն նորա հին և վայելուչ շինուածք. քանզի 'ի բազում սասանութեանց երկրի և 'ի բուռն պատերազմաց և տիրելոյ քաղաքին Օսմանեանց և Պարսից, խանգարեալ են. նշանաւոր են այժմ մեացուածք մզկիթի միոյ կապուտակ ալապադր վիմաք, մանաւանդ քանդակք դրան նորին, և ապարանք՝ զոր ոմանք Զոպէյտայ շինած կարծեն. և բազում կարաւանատունք. այլ և սոքա և տունք և մզկիթք ցածունք են առ ահի սասանութեանց: Բայց վաճառականութիւն քաղաքին և երթևեկ վարուն է յոյժ. ընդունի վաճառս 'ի Հնդկաց և յԱնգղլոյ, 'ի Ռուսաց և յՕսմանեստանէ, և ընդ բազում կողմանս ճանապարհք արքունիք ձգին 'ի քաղաքէն, որ առաջին շահաստան քաղաք է Պարսից: Արտաքոյ պարսպացն պատին ընդարձակ արուարձանք և պարտէզք, որ յառաջագոյն անընդմէջ մասն էին քաղաքին, և թիւ բնակչացն կէս միլիոն թուէր. այժմ ըստ ոմանց իբրև 150,000, բայց ըստ այլոց կիսով չափ ևեթ կամ նուազ ևս, որոց մեծագոյն մասն Պարսիկք են և Թուրքք 'ի Գըզըլպաշ տոհմէ, և Հայք սակաւ, և նուազունք ևս յօտար ազգաց. յորոց Անգղլացիք ունին հիւպատ հաստատեալ 'ի սմա, և քարոզիչք ոմանք՝ դպրոց: Խանն կուսակալ Դավրիժու յորդւոց շահին Պարսից ընարի, և նախապատիւ է քան զամենայն կուսակալս պետութեանն (1):

113. Ընդ մէջ Դավրիժու և Մարանդայ կայ ՍՕՖԻԱՆ քաղաքաւան 'ի վիճակին ՌՈՒՏԻԿԱՌ առ Թուրէան գետով. 'ի մոից նորա ԷՐԶԷՆԷԿ վիճակ և Տէղէի-խաւիւ գլխաւոր աւան մերձ 'ի ծովն Երիւք ժամուք. յորոյ հարաւոյ և 'ի մոից Դավրիժու ԳԱԼՏԸՐԱՆ վիճակ. արևմտակողմն սորա որ է հիւսիսային արևելեան ափունք ծովուն՝ աղուտ դաշտ է, և 'ի մոից կամ յահեկէ Թուրէանայ ցամաքն կղզիաձև յառաջացեալ 'ի ծովն, և են 'ի նմին արքունի ձմերոցք խանին Դավրիժու 'ի Գէ-մբէր շինի. և ցամաքակղզին այն Շահի կոչի (արքունի) յորմէ և ծովն ինքնին: Ի հարաւոյ դաշտին և զարևելեան եզերքք ծովուն գըլխաւոր տեղիք 'ի վերայ Ճանապարհին որ 'ի Դավրիժու իջուցանեն 'ի Մերկեմեթապատ, են Տէհէ-խէրիէան, Շէրոմն և ՊԻՆԱՊ քաղաք փոքր առ Սաֆի գետով մերձ 'ի Ճաղադու գետ. ընդ մէջ երկոցուն առաջնոցն կան անուանի քարաղբեղք. զի ջուր քաղացեալ գործէ զալապատրն պուլոտ: Իսկ 'ի հարաւոյ Դավրիժու ՄԷՀՐԱՆԲՈՒՏ վիճակ. յորոց հարաւոյ ամբառնայ անուանի լեառն Սի-հէնպ կամ Սահանդ 8000', որ տարածէ թեւս շուրջանակի. 'ի մոից նորա ամբառնայ Տէդրպաղ առաւել քան զ'11500'. իսկ յելից հարաւոյ բղխեն բազմառուքն Քարանիա և Շահի-Բոպ որք օժանդակեն զՀզըրագոյն գետն ԳԸՂԸԼ-ԷՕՂԷՆ կամ ՍԷՖԻՊ-Բոպ (Սպիտակ գետ): — Իսկ յելից Դավրիժու առ Սիւրխապ գետով տարածի ՊԷՏԱԻՍՏԱՆ վիճակ ցոստս Սաւալան լերանց. և 'ի հարաւոյ գետոյն կայ ընդարձակ դաշտ աղի:

114. Ի հարաւոյ Սիւհէնտայ, և յելից հարաւոյ ծովուն, 'ի հիւսիսոյ Մէրկեմեթապատայ և 'ի մոից Քարանկուի կայ ՄԱՐԱՂԱ գաւառ, համանուն քաղաքաւ առ Սաֆի գետով. յորում Հուլաւու խան ետ կանգնել աշտարակ ատեղագիտաց, 'ի ձեռն իմաստնոյն Նասրէտտին Թուսեայ. որոյ ցարդ երևին աւերակք 'ի բլրի ուրեմն. հուպ 'ի քաղաքն յայլում քարաբերին հատեալ կան տաճարաձև անձաւք և սենեակք 'ի վաղ ժամանակաց: Հին և անշուք է քաղաքն, ունի գեղեցիկ բաղանիս և կամուրջ մի: Բնակիչք 15,000, Պարսք, Հայք, Հրեայք և Քաղդէացիք: — Յելից Մարաղայ կայ ՀԷՇԴԱՐՈՒՏ վիճակ յահեկէ Քարանկու գետոյ, Սէրէսքէնպ քաղաքաւանաւ. 'ի հարաւակողմն գետոյն առ խառնրդով վտակի միոյ կան զարմանալի աւերակք Գալէի Զահաք (Բերդ Աժդահակայ) կոչեցեալք, քարաշէն աւան, գեղեցիկ դրամբ. յորոյ վերայ կայր երբեմն և արձանագիր հին:

115. Յելից վիճակիս և Սիւհէնտայ մինչև ցելս Ատրպատականի 'ի սահմանս Կիլանայ ձգի գաւառն ՄԻԱՆԷ, 'ի հիւսիսոյ Գըզըլէօզէնայ և Իրագ ԱՃԷՄի

(1) Յետ գրելոյ մեր զայսոսիկ՝ ծանեաք զի սասանութիւն սաստկագոյն գրեաթէ հիմնովին կործանէ զքաղաքս մեծ, 'ի 23 աւուր սեպտեմբերի 1854 տարւոյս: Ընդ նմին և զխոյ քաղաք (104) և գեօղեան բազում, թերևս և զայլս ոմանս 'ի տորագրելոցս զորոց ոչ ունիմք ստոյգ տեղեկութիւն: